Եղիշե Չարենց

Նաիրի երկրից

Եկել երկաթե երգ եմ ձեզ ասում
Ես կարմիր պոետ Եղիշե Չարենց:
Ե՛ս եմ՝ նաիրցի մի հսկա պոետ
Եկել եմ ահա դարերի հեռու
Ու հին մշուշից
Մշուշի միջից անթիվ դարերի.
Եկել եմ ահա ու կանգնել եմ սեգ,
Եվ երգ եմ ասում հիմա բոլորիդ
Երկաթե մի երգ:

Ոտքերս, ամուր, հողի մեջ մխած,
Գլուխս աստղերում,
Անսասան, հաստատ կանգնած հողմային
Օրերի հրում
Իմ հավերժատես, պայծառ աչքերով
Նայում եմ հեռուն:

Դեմս հողմակոծ աշխարհն է անծայր,
Հեռո՛ւ ու հեռո՛ւ,
Շաչում է, զնգում, ահեղ ու պայծառ
Բոսո՛ր հողմերում:
Գլխիս վրայով
Թռչում են, շաչում օրերը արագ,

Հողմերի նման հավիտենության
Ծեծում են կուրծքս վիթխարի թափով,
Ծեծում են կուրծքս, շաչում ու իրենց
Երկաթ թևերով թռչում են հեռու
Ու հեռուներում ոռնում են անտես,
Ոհմակների պես քաղցած գայլերի,
Որ գազազել ու շշմել են ասես
Հողմերում հրի:
Ու կանգնել եմ ես՝
Ոտքերս ամուր հողի մեջ մխած
Ու գլուխս տո՛թ խառնարաններում
Անցած ու գալիք անթի՛վ օրերի:

Ու կանգնել եմ ես՝
Լեռների վրա իմ ավեր երկրի,
Կանգնել եմ հաստատ ու երգ եմ ասում
Խնդասիրտ, արի,
Եվ նետում եմ իմ երգը հողմաձայն
Ժողովուրդներին բոլո՛ր կողմերի
Բոլո՛ր կողմերում տառապող մարդուն:
Եվ ասում եմ ես.
Եկե՛լ եմ ահա.
Եկե՛լ, հասել եմ դարերի մուժից,
Անբոց մշուշից հեռու դարերի
Եվ բերել եմ ձեզ, կարմիր ձեր երթին,
Սի՛րտը Նաիրի...
Բերե՛լ եմ կարմիր սիրտը Նաի՛րի
Ձեր կարմիր հրին կարմիր ողջակեզ.
Եվ ասում եմ ես
Ժողովուրդներին բոլո՛ր կողմերի,
Բոլո՛ր կողմերում տառապող մարդուն.
Լսե՛ք, հե՛յ, լսե՛ք,
Բոլոր կողմերում տառապող մարդիկ,

Բանվորներ արի բոլոր կողմերի,
Եվ գյուղացիներ, զինվորներ բոլոր
Ռազմադաշտերից տուն դարձող արդեն.
Լսե՛ք, հե՛յ, լսե՛ք.
Դուք, որ հաղթական
Ելե՛լ եք արդեն ու կովով ըմբոստ,
Շաչող, շառաչող օրերի միջով
Գնում եք դեպի Կարմիր Ապագան
Լսե՛ք, հե՛յ, լսե՛ք, իմ ողջույնը սեգ
Ու եղբայրական...

Նաիրի երկրից իմ ողջույնը ձեզ.
Ձեր կարմիր հրին Նաիրի կարմիր
Սիրտը ողջակեզ:

Ո՞վ գիտե արդյոք՝
Բերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու ձեր մեծ ու հզոր երգին
Մի երգ ավելի՛ ըմբոստ ու արի,
Քան իմ երգը մեծ երգը Նաիրի...

Ո՞վ գիտե արդյոք՝
Բերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու հզոր, բոսոր ձեր սրտին
Մի սիրտ ավելի՛ ըմբոստ ու արի,
Քան իմ սիրտը թեժ սիրտը Նաիրի:

Եվ ո՞վ, ո՞վ կասի՝
Նետե՞լ է արդյոք մեկը աշխարհում
Այսօրվա կարմի՛ր, կարմիր ձեր երթին
Ողջույն ավելի՛ առնական, արի,
Քան ողջույնը քո, երկիր արնաքամ,
Կարմի՛ր Նաիրի...

Ծաղկի պես կարմիր, հրասիրտ, զվարթ,
Բացվել է այսօր սիրտս նաիրյան
Աշխարհի սրտում
Թեժ, կարմիր սրտում վառվող աշխարհի:

Իմ հազա՛ր անգամ ու հազա՛ր սրով
Արնոտած, խոցված սիրտը նաիրյան
Բացվել է այսօր աշխարհի սրտում.
Հուզում է հոգիս անհուն մի խնդում,
Խնդում մի հրե
Եվ երգում եմ ես, ահե՛ղ ու պայծառ,
Քո էն երգը մեծ, տիեզերական,
Երկի՛ր Նաիրի...
Երգում եմ հիմա քո երգը էն մեծ,
Որ սրտիս տվեց տառապանքը քո,
Քո աշխատանքը, հաղթ ժողովրդի
Տառապանքը մեծ:

Ե՛ս ե՛ս եմ նորից.
Դարերից եկած անհո՛ւն մի պոետ
Եղիշե Չարենց
Նաիրի երկի՛ր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու զավակը մեծ...

Ե՛ս ե՛ս եմ նորից.
Ոսկի երակը հնամյա ցեղիս,
Իմ ջլաբազուկ, հաղթ ժողովրդի
Օղակը վերջին,
Տվել եմ սիրտս գալիք օրերի
Երկաթե երգին,
Կապել եմ կյանքս Գալիքի հետ վառ

Եվ կրում եմ իմ մեծ, հսկա սրտում
Մի երկաթակուռ, նո՛ր, հզո՛ր աշխար:

Ու կանգնել եմ ես, հզոր ու հաստատ,
Լեռների վրա քո հավերժաձյուն
Կանգնել եմ, պայծառ, ու շուրջս հիմա
Գալիքի կարմիր թևերն են շաչում
Եվ կարծրանում ու պնդվում է հոգիս
Նրանց շառաչում:

Ու հպարտ եմ ես, հպարտ է ու խենթ
Քո կարմիր հրով լցված իմ հոգին.
Հպարտ եմ, որ ես անհուն մի պոետ,
Ձայնով խնդագին
Խառնում եմ այս նո՛ր, հզոր ե՛րգը քո
Բոլորի՛ երգին...

1920